

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28/3

14 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց «Մուլտի Ակվամարին» ՍՊԸ 18.06.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 17.06.2015 թ-ի թիվ 5011377 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2015 թ-ի թիվ 5011377 հանձնարարագրի համաձայն «Մուլտի Ակվամարին» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 17.06.2015 թ-ի թիվ 5011377 ակտը (այսուհետ նաև Ակտ):

Հանձնաժողովին ներկայացված 18.06.2015 թ-ի դիմում-գանգատով Ընկերությունը խնդրել է անվավեր ճանաչել Ակտի 4-րդ կետի 2-րդ ենթակետը: Այնուհետև, Ընկերության գլխավոր տնօրենի 14.07.2015 թ-ի գրությամբ ներկայացվել է միջնորդություն՝ 18.06.2015 թ-ի դիմում-գանգատն առանց քննության թողնելու վերաբերյալ:

Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝

...

բ) դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից.»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Մուլտի Ակվամարին» ՍՊԸ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«Մուլտի Ակվամարին» ՍՊԸ 18.06.2015 թ-ի դիմում-գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

